

ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ 510-ԱՄՅԱԿԸ (1512-2022 ԹԹ.)

Գագիկ Սուքիասյան

Մանկավարժական գիտությունների դոկտոր
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 13/ա
Էլ. հասցե՝ gagiksukiasian@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 21.12.2021, գրախոսվել է 24.12.2021, ընդունվել է տպագրության 12.12.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.3-220

Ներածություն

Հայ գրատպության պատմությունը համաշխարհային մշակույթի ու քաղաքակրթության զարգացման պայծառ էջերից է և առանձնահատուկ տեղ է զբաղեցնում «Գուտենբերգյան գալակտիկայում»: Դարեր շարունակ ենթարկվելով բարբարոս ժողովուրդների գերիշխանությանը և զանգվածային կոտորածների՝ հայ ժողովրդի զգալի մասը ստիպված էր հեռանալ մայր երկրից՝ սփռվելով աշխարհով մեկ: Տարբեր երկրներում ստեղծելով գաղթօջախներ՝ նրանք ամենուր հիմնեցին տպարան, դպրոց, եկեղեցի, զարգացրին հարուստ մշակույթ՝ ձգտելով պահպանել իրենց ազգային դիմագիծը:

Աղբյուրները վկայում են, որ տպագրական արվեստի հետ հայերի ամենավաղ առնչությունը գալիս է XIV դարից: Այսպես. Չինաստանում Ռուսաստանի դեսպան (ծագումով մոլդովացի) Նիկոլայ Գավրիլովիչ Սպաֆարին (1636-1708) տպագրության «չինական գաղտնիքը» Արևելքից Եվրոպա տարածելու գործում հիշատակել է նաև հայազգի Անտոնին: Իր գրքի «Աշխարհի՝ Ասիա կոչվող առաջին մասի նկարագրությունը» գլխում նա գրել է. «...երբ կալմիկները (մոնղոլները - Գ.Ս.) և թաթարները գրավեցին Չինաստանը, նրանց հետ Չինաստան եկան հայր Օդերիկը, Անտոն Հայը և Մարկո Պավել (Պոլո - Գ.Ս.) վենետիկցին... նրանք Չինաստանից Եվրոպա բերեցին այդ արվեստները»¹:

Իսկ Ֆրանսիացի գիտնական Պ. Գյումանը 1916 թ. կարծիք է հայտնել, թե տպագրությունը Եվրոպա կարող էին բերել փոքրասիական և կովկասյան ժողովուրդները, օրինակ՝ հայերը, թուրքերի և մոնղոլների ճնշում-

¹ Спафарий 1960, 184.

ներից նահանջելով արևմուտք²։ Ըստ Գյումանի, մի խումբ հայեր, ույգուրների մոտ սովորելով տպագրության ամենակատարյալ ձևերը, մեկնում են Նիդեռլանդիա, որտեղ ապրում էր Լաուրենս (Լավրենտի) Յանսզոն Կոստերը (1405-1484)՝ եվրոպական գրատպության ենթադրյալ հիմնադիրներից մեկը (Գուտենբերգից առաջ)։ Սակայն գրքագիտության նորագույն տվյալները հաստատում են, որ Նիդեռլանդիայի Հառլեմ քաղաքի վանական Կոստերը տպագրական տեխնիկայի գաղտնիքն իմացել է արևելքից եկած հայ գաղթականներից³։ Սա, մեր կարծիքով, ցնցող փաստ է համաշխարհային հաղթանակի և արդի գրքագիտության զարգացման համար։

Հայկական գրատպական կենտրոնների զարգացումը XVI-XXI դդ. որպես համակարգ և տպագիր մշակույթի արտացոլումը մատենագիտական հրատարակություններում

Հայ գրատպության օրրանը Վենետիկն է (Իտալիան), որտեղ 1512 թ. Հակոբ Մեղապարտը⁴ հիմք դրեց մեսրոպատառ առաջին տպագիր հրատարակությանը՝ «Ուրբաթագիրք» վերնագրով։ Այս հազվագյուտ գրքի մի օրինակը գտնվում է Հայաստանի ազգային գրադարանում, մյուսը՝ Մխիթարյան միաբանների Մատենադարանում։ Այնուհետև (1512-1513) լույս է տեսել ևս չորս գիրք. «Պատարագատետր», «Աղթարք», «Պարզատոմար» և «Տաղարան»։ Այսպիսով, հայերը ոչ միայն եվրոպացի շատ ազգերից առաջ, այլև նախկին Խորհրդային Միության ժողովուրդներից ու ներկայիս ԱՊՀ երկրներից առաջինն էին, որ իրականացրին ազգային լեզվով տպագրություն։ XVI դ. հայ տպագրության (հիմնադիրը Աբգար Դպիր Թոխատեցին էր, հետագայում՝ Գրիգոր Մարզվանեցին. կարևոր օջախներ էին նաև Կ. Պոլիսը (1567), Հոռնը (1584), որտեղ տպագրվել են բազմաթիվ գրքեր։

XVII դ. հայ տպագրությունը թևակոխում է նոր շրջան։ Հայկական տպագրական արվեստի զարգացման մյուս կենտրոնները դարձան Լվովը (1616), Միլանը (1621), Փարիզը (1633), Լիվոռնոն (1643), Լայպցիգը (1680)։ 1638 թ. Նոր Զուղայում Խաչատուր Կեսարեցին հիմք է դնում հայ տպագրական օջախի, որն առաջինն էր ոչ միայն Իրանի հողում, այլև Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների կյանքում։ Նոր Զուղայում են տպա-

² Владимиров 1988, 95.

³ История книги 1998, 50.

⁴ Իշխանյան 1982:

գրվել «Հարանց վարք» (1641), «Ժամագիրք Ատենի» (1642) գրքերը: Այս դարաշրջանի հայկական տպարաններից ամենահայտնին Ամստերդամին էր (1660), որտեղ Ոսկան Երևանցու ջանքերով 1666 թ. տպվեց հայերեն առաջին ամբողջական «Աստվածաշունչը», որը մեծ անկյունաքարն եղավ հայ տպագրության համար: Հետագայում ամստերդամյան գրահրատարակչությունը զարգացավ Թովմաս, Ղուկաս և Միքայել Նուրիջանյանների շնորհիվ (պատմական Հայաստանի Վանանդ գավառից): Վանանդեցիները 1695 թ. Հոլանդիայում հրատարակեցին առաջին հայագիր քարտեզը՝ «Համատարած աշխարհացույցը», V դ. հայ նշանավոր պատմիչ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»: Հայ մատենագիտության ժամանակակից հրատարակություններում առանձնահատուկ տեղ ունի Պետրոս Հովհաննիսյանի հեղինակած՝ Մովսես Խորենացու ամբողջական մատենագիտությունը (Եր., 2013)՝ նվիրված «Հայոց պատմության» անդրանիկ տպագրության 320-ամյակին⁵:

XVIII դ. հայերեն գրքերի հրատարակման գործում աչքի ընկնող դեր են խաղում Մխիթարյանները⁶, որոնք 1701 թ. հաստատվեցին Վենետիկում: Նրանք սկսեցին հրատարակել հայագիտական բնույթի բազմաթիվ գրքեր, ինչպես նաև հունա-հռոմեական գրականությունից արված թարգմանություններ: Հարկ է հիշել Մ. Սեբաստացու «Բառգիրք հայկազյան լեզվի» երկհատոր բառարանը (1749-69), Մ. Չամչյանի եռահատոր «Հայոց պատմությունը» (1784-86) և այլն: Այդ ժամանակաշրջանում հայկական տպագրության օջախներ են ստեղծվում Լոնդոնում (1736), Մադրասում (1772) (այստեղ 1794 թ. լույս է տեսնում հայերեն առաջին պարբերականը՝ «Ազդարարը») և Կալկաթայում (1796): Անհրաժեշտ է նշել, որ 2019 թ. նոյեմբերի 28-29-ին Հայաստանի ազգային գրադարանում կայացավ գիտաժողով՝ նվիրված «Ազդարարի» 225-ամյակին, որտեղ գիտական զեկուցումներով հանդես եկան գիտության, կրթության և մշակույթի բազմաթիվ գործիչներ Հայաստանից, Արցախից և Սփյուռքից⁷: 1781 թ. Գ. Խալդարյանի նախաձեռնությամբ առաջին անգամ Ռուսաստանում՝ Սանկտ Պետերբուրգում, հայկական տպարանի հիմքն է դրվում: 1786 թ. տպարան է հիմնվում Նոր Նախիջևանում, իսկ տասը տարի անց՝ Աստրախանում (1796): Այստեղ

⁵ Հովհաննիսյան 2013:

⁶ Յարոմյան 1989, Պզդիկյան 2003, հմմտ. նաև Морган де Жак 2020:

⁷ Հայ մամուլի դերը 2020:

1815 թ. լույս է տեսնում արևելահայ առաջին շաբաթաթերթը՝ «Արևելյան ծանուցմունքը»:

XVIII դ. երկրորդ կեսին Հայաստանում (Էջմիածնում), առաջին անգամ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի (1710-1780) նախաձեռնությամբ 1771 թ. հիմնվում է տպարան, որին կից 1776 թ. գործել է թղթի գործարան: Այստեղ են լույս տեսել «Արարատ» (1868), 1944-ից «Էջմիածին» հայագիտական ամսագիրը (հայ եկեղեցու պաշտոնական օրգանը), Ս. Երևանցու «Ջամբուր» (1873) և այլ գրքեր:

Գրատպական կենտրոնների աշխարհագրական ընդգրկմամբ և տպագիր հրատարակությունների բազմազանությամբ ամենից բեղունը եղավ XIX դարը: Այս դարում հայոց վերազարթնումի կենտրոնը մնում էր Խոտալիան: Սակայն Մխիթարյանների մի մասը, որոնք 1772 թ. Սուրբ Ղազարից հեռացել էին գնացել Տրիեստ, 1810 թ. տեղափոխվում են Վիեննա (Ավստրիա), որտեղ 1812 թ. հիմք են դնում տպագրական մի նոր օջախի: Վենետիկի և Վիեննայի հայ գաղթօջախները մինչև օրս էլ անգնահատելի դեր են խաղում հայկական մշակույթի վերածննդի հարցում: Այս քաղաքներում են հիմնադրվել հայագիտական երկու արժեքավոր հանդեսներ՝ «Բազմավեպը» (Վենետիկ, 1843) և «Հանդես ամսօրյան» (Վիեննա, 1887), որոնք լույս են տեսնում ցայսօր: Վերջապես՝ եվրոպական այդ կենտրոնների հայկական մատենադարաններում է հիմնվել հայ ազգային մատենագիտական իսկական դպրոցը, որը սկզբնաղբյուր դարձավ եվրոպական հայագիտության ու նրա մատենագիտության զարգացման համար:

XIX դարում հայ տպագրական կենտրոններ են ստեղծվում ինչպես Եվրոպայի, Ասիայի, այնպես էլ Ամերիկայի և Աֆրիկայի երկրներում: Գրատպության զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցան Բոմբեյի (1810), Երուսաղեմի (1833), Կահիրեի (1865), Ալեքսանդրիայի (1888), Ժնևի (1891), Աթենքի (1892), Թեհրանի (1894) հայկական տպարանները: 1857 թ. հայ տպագրությունը մուտք է գործում Նյու-Յորք, իսկ 1899 թ.՝ Բոստոն: Այս շրջանին է վերաբերում Շուշիի (1828), Մոսկվայի Լազարյան ճեմարանի (1828) և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի (1823) հայկական տպարանների հիմնումը, որոնց դերը նույնպես մեծ էր գրահրատարակության և տպագիր մշակույթի զարգացման մեջ: Ս. Նազարյանցի խմբագրությամբ և Մ. Նալբանդյանի եռանդուն աջակցությամբ 1858-1864 թթ. Մոսկվայում լույս է տեսել «Հյուսիսափայլ» ամսագիրը: Թիֆլիսում է առաջին անգամ տպագրվել հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի (1809-

1848) «Վերք Հայաստանի» վեպը (1858): Հասարակական-քաղաքական, գրական ու մշակութային կյանքը լայնորեն պատկերելու տեսանկյունից աչքի ընկնող դեր են խաղացել «Մեղու Հայաստանի» (1858-1886), «Արծագանք» (1882-1898), «Մուրճ» (1889-1907), «Ազգագրական հանդես» (1896-1916), «Գեղարվեստ» (1908-1921) և այլ պարբերականներ, որոնք նույնպես հրատարակվել են Թիֆլիսում: Իսկ Շուշիում լույս տեսած առաջին գիրքը Հարություն Զուղայեցի Դավթյանի «Պատմություն Սուրբ Գրոցն» է (1828): Բազմաթիվ տպագիր գործերից ու բազմանուն պարբերականներից բացի, Շուշիում են առաջին անգամ տպագրվել Ռաֆֆու «Խենթը» (1881), ինչպես նաև Բայրոնի «Շիլլոնի կալանավորի» (1837), Գոգոլի «Տարաս Բուլբայի» (1886), Ֆիրդուսու «Ռոստամ և Սոհրաբի» («Շահնամե») (1893) հայերեն առաջին թարգմանությունները:

Նշանավոր էր նաև XIX դ. 2-րդ կեսը, երբ Հայաստանի թե՛ արևելյան մասում՝ Երևանում և Ալեքսանդրապոլում (1876), և թե՛ արևմտյան մասում՝ Վանում (1858) և Մուշում (1863), ստեղծվեցին գրատպության նոր կենտրոններ: Վանում (Վարագա վանքում) 1858 թ. քաղաքական, հոգևոր և մշակութային մեծ գործիչ Մ. Խրիմյանի (1820-1907) խմբագրությամբ լույս է տեսնում «Արծիվ Վասպուրականի» ամսագիրը, իսկ Մուշում Գ. Սրվանձտյանի (1840-1892) խմբագրությամբ հրատարակվեց «Արծվիկ Տարոնո» պարբերականը (1865):

Գրքամատենագիտական հետազոտությունը ցույց է տալիս, որ մինչև 1920 թ.⁸ աշխարհում գործած 460 հայկական տպարաններում տպագրվել են այնքան հայերեն գիրք ու պարբերական, որոնք կազմում են համաշխարհային ամբողջ գրքային արտադրանքի 14,5 տոկոսը⁹: Սա լուրջ փաստ է տպագրական քաղաքակրթության զարգացման պատմության մեջ:

Մայր Հայաստանը գրքի և տպագրական արվեստի զարգացման ծաղկուն կենտրոն դարձավ խորհրդային և հետխորհրդային շրջաններում, երբ Երևանում սկսեցին հիմնադրվել տասնյակ գրահրատարակչություններ՝ «Հայպետհրատ» (1921), «Գիտություն» (1936), «Լույս» (1964), «Հայկական հանրագիտարան» (1967), «Տիգրան Մեծ» (1968), «Խորհրդային գրող» (1976), «Արևիկ» (1986), «Էդիթ Պրինտ» (1993), «Ձանգակ-97» (1997) և այլն: Հայալեզու և օտարալեզու գրականության տարածման գործում սկսեցին կա-

⁸ Իշխանյան 1981, 153:

⁹ Սուքիասյան 1990:

րևոր նշանակություն ձեռք բերել նաև բուհական տպարաններն ու ժամանակակից էլեկտրոնային տեխնոլոգիական միջոցները¹⁰:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալներով՝ միայն 1980-ական թթ. վերջերին աշխարհում լույս է տեսել 10 միլիարդ գիրք, իսկ Հայաստանում՝ 12 միլիոն օրինակ հրատարակություն:

Ըստ աղբյուրների՝ հայկական ձեռագրերի և տպագիր գրքերի բազմաթիվ հուշարձաններ անհետ կորել են, բայց զգալի մասը «ապաստանել» է Հայաստանի և արտասահմանի, ներառյալ հայկական սփյուռքի գրադարաններում, մատենադարաններում ու թանգարաններում: Այդ մասին են վկայում Հայաստանում ու հայկական սփյուռքում լույս տեսած բազմաթիվ տպագիր ձեռագրացուցակներն ու գրացուցակները: Օրինակ, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հրատարակած «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի»-ն (հ. Ա՝ 1984, հ. Բ՝ 2004, հ. Գ՝ 2007, հ. Դ՝ 2008, հ. Ե՝ 2009, հ. Զ՝ 2012, հ. Է՝ 2012, հ. Ը՝ 2013, հ. Թ՝ 2017, հ. Ժ՝ 2019)՝ ընդգրկելով մինչև 3400 ձեռագրերի մատենագիտական նկարագրություն և Հայաստանի ազգային գրադարանի հրատարակած «Հայ գրքի մատենագիտությունը» (հ. 1՝ 1988, հ. 2՝ 1967, հ. 3՝ 1999, հ. 4՝ 2007, հ. 5՝ 2012, հ. 6՝ 2018), ընդգրկելով 1512-1940 թթ. տպագրված գրքերը: Համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ արժեքավոր մատենագիտություններն օժտված են նյութերի ընդգրկման անչափելի խորությամբ ու բազմազանությամբ, մատենագիտական նկարագրության առանձնահատկություններով, որոնք աղբյուրագիտական, գրադարանային-տեղեկատվական և գրքագիտական տեսանկյուններից ունեն մեծ նշանակություն: Դրանցում խստորեն պահպանված է նաև ժամանակագրական կարգը, որը չափազանց կարևոր է:

Այդ ամենից բացի, հայ գրքին նվիրված մատենագիտական նորանոր աշխատանքներ են կատարվել ու հրապարակվել Երևանում, Սուրբ Էջմիածնում, Բեյրութում, Կահիրեում, Թիֆլիսում, Լոս Անջելեսում, Անթիլիասում, Նոր Զուլայում, Արցախում և այլուր: Այդ մասին են վկայում հետադարձ բնույթի հետևյալ հրատարակությունները.

1. Արցախ-Ղարաբաղ: Մատենագիտություն, մաս 1, 1988-1989, կազմ.՝ Ռ.Վ. Չիլինգարյան, Ս.Զ. Բիլբուլյան, Երևան, ԵՊՀ, 1993, 190 էջ:

¹⁰ Սուքիասյան 2018, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն 2011:

2. Գիրքը Սովետական Հայաստանում, հ. 1, 1920-1930, Երևան, ՀՍՍՀ պետ. գրապալատ, 1978, 574 էջ, հ. 2, 1931-1940, կազմ.՝ Լ. Ղազարյան, Թ. Սարգսյան, Երևան, Հայաստանի ազգային գրապալատ, 1988, 953 էջ, հ. 3, հ. 9, 2003-2012 թթ.:

3. Երուսաղեմի հայ տպագիր գրքի մատենագիտություն (1833-1996), կազմ.՝ Ա.Ա. Մուրադյան, առաջաբան և խմբ.՝ Գ.Ա. Սուքիասյանի, Երևան, հեղ. հրատ., 2011, 148 էջ:

4. Լիբանանահայ գիրքը 1894-2012, Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Ա. Տազէսեան և Ա. Իվրնէշլեան, Պէյրութ, 2013, 440 էջ:

5. Հայ գիրքը Եգիպտոսի մեջ (1888-2011), Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Ս.Ն. Պայրամեան: Գիրքը նվիրված է Հայ գրատպության 500-ամյակին, Գահիրե, Նուպար տպարան, 2012, 287 էջ:

6. Հայոց Մեծ եղեռն. մատենագիտական ցանկեր, կազմողներ՝ Ա. Մալոյան, Լ. Գրիգորյան, Գ. Թադևոսյան: Ուսումնասօժանդակ ձեռնարկ, Երևան, «Տիգրան Մեծ», 2016, 180 էջ:

7. Հայոց Եղեռնի քրեստոմատիա, կազմ.՝ Ն. Սուքիասյան, Երևան, «Էդիթ Պրինտ», 2015, 520 էջ:

8. Հարությունյան Ա, Հայոց ցեղասպանություն և Հայկական հարց: Գրքերի մատենագիտություն (1860-2010), խմբ.՝ Պետրոս Հովհաննիսյան: Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2014, 560 էջ:

9. Վարդան Լևոն, Հայկական տասնհինգը թուրք մատենագիտության և մամուլին մեջ և մենք, Պէյրութ, հրատ. նշված չէ, 1998, 257 էջ:

10. Հայերեն երգարանների մատենագիտություն (1513-1921), աշխատասիրությամբ՝ Կ. Հարոյանի, խմբ. և առաջաբանի հեղինակ՝ Թ. Պողոսյան, Երևան, «Նահապետ», 2014, 612 էջ:

11. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Վաչե և Թամար Մանուկյան, Մատենադարան, Ցեղասպանագիտական գրականություն, Սուրբ Էջմիածին, 2015, 28 էջ:

12. Մինասյան Լ.Գ., Հայ տպագիր գիրքը Իրանում 1636-2000, Մատենագիտություն, Նոր Զուղա, 2001, 224 էջ:

13. Մինասյան Լ.Գ., Մատենագիտական ցանկ Սպահանի հայոց թեմին վերաբերող հայերեն, պարսկերեն և անգլերեն գրքերի ու հոդվածների: Նվիրվում է հայերի Նոր Զուղայում հաստատման 400-ամեակին, Նոր Զուղա, 2007, 122 էջ:

14. Նալպանտեան Հովսեփ, Հայ գիրքը Ամերիկայի մեջ (1857-2015), Լույս Անջելես, հրատ. նշված չէ, 2015, 386 էջ:

15. Պողոսյան Ն., Հայ հնատիպ գրքերի ձեռագիր հիշատակություններ (1512-1712): Նվիրված է հայ գրատպության 500-ամյա հոբելյանին, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, 88 էջ:

16. Սարգիսեան Յակոբ, Հայ գիրքը եղեռնի տարիներուն (մատենացանկ), առաջաբանը Գարեգին Բ կաթողիկոսի, Անթիլիաս-Լիբանան, 1985, 74 էջ:

17. Տեր-Խաչատրյան Ա., Հայ գրքի մատենագիտական գործեր, խմբ.՝ Կ. Հովհաննիսյան, Պեյրուֆ, 2014, 420 էջ:

18. Арцах-Карабах. Библиография на русском языке: 1988-2010, сост. А.Г. Симонян, А.А. Гарибян, Э.А. Бабаян, Ер., ЕГУ, 2011, 36 с.

19. Армянская книга в Грузии: 1921-1938. Библиография, сост. С. Шхян, Тбилиси: Книжная палата Грузии, 1941, 152 с. и т.д.

Ընդգրկած աղբյուրների ծավալով, պատմականությամբ ու եզակիությամբ այս աշխատություններն առանձնանում են թեմատիկ ուղղվածությամբ և ունեն գրքամատենագիտական ու հայագիտական կարևոր նշանակություն:

Առանձին խումբ են ԽՍՀՄ բազմազգ ժողովուրդների գրականությունը (հայ գրականությունը օտար լեզուներով և օտարալեզու գրականությունը հայերենով) արտացոլող մատենագիտական հրատարակությունները, որոնք գրադարանային-տեղեկատվական, պատմամշակութային ու սոցիալ-հաղորդակցական կապերի զարգացման տեսանկյուններից չեն կորցրել իրենց արդիականությունը նաև այսօր¹¹: Այդպիսիք են՝

1. Հայ-բելոռուսական գրական կապեր. 1935-1978: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Է. Բաբայան, Լ. Եփրեմյան, Երևան, 1979, 108 էջ: ՀՍՍՀ կուլտ. մինիստրության Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադ.-ի ինֆորմ. և մատենագիտ. բաժին:

2. Հայ-էստոնական գրական կապեր. 1945-1980: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Հ.Ա. Նազինյան, Ի.Ս. Սիմոնյան, Երևան, 1981, 146 էջ: ՀՍՍՀ կուլտ. մինիստրության Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադ.-ի ինֆորմ. և մատենագիտ. բաժին:

3. Հայ-թուրքմենական գրական կապեր. 1944-1982: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Պ.Ս. Գալստյան, Ի.Ս. Սիմոնյան, Երևան, 1983, 73 էջ: ՀՍՍՀ կուլտ. մինիստրության Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադ.-ի ինֆորմ. և մատենագիտ. բաժին:

4. Հայ-լատիշական գրական կապեր. 1945-1975: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Հ. Նազինյան, Ի. Սիմոնյան, Երևան, 1978, 117 էջ: ՀՍՍՀ կուլտ. մինիստրության Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադ.-ի ինֆորմ. և մատենագիտ. բաժին:

5. Հայ-լիտվական գրական կապեր. 1946-1975: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Հ. Նազինյան, Ի. Սիմոնյան, Երևան, 1976, 72 էջ: ՀՍՍՀ կուլտ. մինիստրության Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադ.-ի ինֆորմ. և մատենագիտ. բաժին:

¹¹ Сукиасян 2019, 65-73.

6. Հայ-կիրգիզական գրական կապեր. 1939-1985: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Լ.Ս. Գալստյան, խմբ.՝ Ա.Հ. Եփրեմյան, Երևան, 1988, 62 էջ: ՀՍՍՀ կուլտ. մինիստրության Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադ.-ի ինֆորմ. և մատենագիտ. բաժին:

7. Հայ-ղազախական գրական կապեր. 1937-1986: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Լ.Հ. Եփրեմյան, խմբ.՝ Ի.Ս. Սիմոնյան, Երևան, 1987, 144 էջ: ՀՍՍՀ կուլտ. մինիստրության Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադ.-ի ինֆորմ. և մատենագիտ. բաժին:

8. Հայ-մոլդովական գրական կապեր. 1945-1980: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Լ.Հ. Եփրեմյան, Երևան, 1982, 159 էջ: ՀՍՍՀ կուլտ. մինիստրության Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադ.-ի ինֆորմ. և մատենագիտ. բաժին:

9. Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից /Իսրայել Օրի:/ Անոտ. մատենագիտություն, կազմ.՝ Լ.Խ. Մարտիրոսյան, խմբկողմ.՝ Ղարիբջանյան Գ.Բ. և ուրիշներ, Երևան, 1985, 21 էջ: Գիտա-ինֆորմ բյուլետեն, ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ. ինֆորմ. կենտրոն:

10. Հայ-վրացական գրական կապեր. 1920-1970: Մատենագիտական ցանկ, խմբկողմ. Վ.Ա. Խաչատրյան և ուրիշ, Երևան, 1979, 192 էջ: ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ. ինֆորմ. կենտրոն:

11. Հայ-տաջիկական գրական կապեր. 1893-1989: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Լ.Ս. Գալստյան, Ա.Հ. Եփրեմյան, Երևան, «Գիրք», 1990, 199 էջ: ՀՀ Մշակույթի նախարարության Հայաստանի ազգային գրադարանի ինֆ. մատենագիտ. բաժին:

12. Հայ-ուզբեկական գրական կապեր. 1940-1984: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Պ.Ս. Գալստյան, Ի.Ս. Սիմոնյան, խմբ.՝ Ա.Հ. Եփրեմյան, Երևան, 1986, 171 էջ: ՀՍՍՀ կուլտ. մինիստրության, Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադ.-ի ինֆորմ. և մատենագիտ. բաժին:

13. Հայ-ուկրաինական գրական կապեր 1861-1971: Մատենագիտություն, կազմ.՝ Ս.Գ. Ամիրյան, պատ. խմբ.՝ Հ.Մ. Դավթյան, Լ.Ի. Սկոկան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, 370 էջ:

14. Հայ գրականությունը օտար լեզուներով, 1971, Մատենագիտություն, կազմ.՝ Ա. Նազինյան, Յ. Խաչատրյան, Ա. Յիցինյան, խմբ. և առաջ.՝ Ռ. Իշխանյանի, Երևան, 375 էջ:

15. Հայրենական մեծ պատերազմի մատենագիտություն (1941-1983), 1985, կազմ.՝ Ռ. Խաչատրյան, Երևան, 134 էջ: ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ. ինֆորմ. կենտ. բյուլետեն:

16. Հայրենական Մեծ պատերազմի պատմության մատենագիտություն (1984-1990) 1990, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ. ինֆորմ. կենտրոն, 60 էջ:

17. Սովետահայ թարգմանական գեղարվեստական գրականություն (1920-1980): Մատենագիտություն, կազմ.՝ Գ.Գ. Հակոբյան, Գ.Ս. Միրիջանյան, Լ.Մ. Զաքյան, Երևան, ՀՍՍՀ պետ. գրապալատ, 1983, 783 էջ (նվիրվել է ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակին):

Բազմաթիվ ու բազմաբովանդակ են նաև պարբերական մամուլի վերաբերյալ կազմված հետադարձ մատենագիտությունները՝ տպագրված Հայաստանում, Արցախում և հայկական Սփյուռքում, որոնք վերոնշյալ ցանկերի հետ ընթերցող հասարակության, կրթական և գիտական հաստատությունների համար տեղեկատվության և գիտելիքի անսպառ աղբյուրներ են: Դրանցից են՝

1. «Արծիվ Վասպուրականի» ամսագրի մատենագիտություն (1855-1856, 1858-1864 թթ.), կազմեց և առաջաբանը գրեց Էմմա Կոստանյանը, խմբագիր՝ Ալբերտ Խառատյան, Երևան, ԳԱԱ հրատ., 2006, 45 էջ:

2. «Գարուն» ամսագրի մատենագիտություն. 1967-2000 թ. (Արդի հայ գրականությունը «Գարունում»), կազմեց և առաջաբանը գրեց Լ. Անանյանը, Երևան, «Ապոլոն», 2011, 510 էջ:

3. Հայ մամուլը Եգիպտոսի մեջ: Մատենագիտական ցուցակ, կազմ.՝ Ս. Պայրամյան, Գահիրե, 2005, 395 էջ:

4. «Հանդես Ամսօրեա»-ի հոդվածները 100 տարում: Մատենագիտական ցուցակ 1887-1986, կազմ.՝ Հ. Օգոստինոս վրդ. Սեքույան, Վիեննա, 1990, 397 էջ:

5. «Հյուսիսափայլ» ամսագիրը 1858-1864 թթ.: Մատենագիտություն, կազմ.՝ Ե. Ներսիսյան, խմբ.՝ Ռ. Իշխանյան, Երևան, Ալ. Մյասնիկյանի անվ. գրադարան: Ինֆորմ. և մատենագիտ. բաժին, 1978, 117 էջ:

6. Մատենագիտություն «Հայկազեան հայագիտական հանդեսի»: Ա-Լ հատորներ (1970-2010), կազմ՝ Օգնայեան Սագո: Հրատ. Հայկազյան համալսարանի հայագիտական ամբիոն, Պեյրուֆ, 2010, 144 էջ:

7. Օգնայեան Սագո: Մատենագիտություն «Սփյուռք» շաբաթաթերթի, 1958-1978, Բեյրութ, 1984, 410 էջ:

8. «Պատմաբանասիրական հանդես»: Մատենագիտական ցանկ (1983-2007), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2009, 318 էջ: Հայերեն, ռուսերեն և անգլ. լեզուներով: Ցանկի 1958-1982 թթ. ընդգրկող մասը (222 էջ) լույս է տեսել 1983 թ.:

9. «Ազդարարի» Մատենագիտություն: Բարսեղյան Խ.Հ., Հայ անդրանիկ պարբերականը, «Ազդարար», Երևան, «Գիտություն», 1994, էջ 57-66:

10. Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցանկ (1794-1980), կազմ.՝ Մ.Ա. Բաբլոյան, պատ. խմբ.՝ Մ.Հ. Մխիթարյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 371 էջ:

11. Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի (1974-2008), կազմ.՝ Արարատ քահանա Պողոսյան, Սուրբ Էջմիածին, 2012, 480 էջ:

12. Տեր-Խաչատրյան Ա., Հայ մամուլի մատենագիտական գործեր, խմբ.՝ Կ. Հովհաննիսյան, Պեյրուֆ, 2014, 693 էջ:

13. Հայ մամուլն ու գրատպությունը Եգիպտոսի մեջ և Հայ գրատպության 500-ամյակի (1512-2012) ոգեկոչումը Գահիրեի մեջ, պատրաստեց՝ Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, Գահիրե, «Նուպար», 2013, 46 էջ:

14. Հարությունյան Մ.Ա., Արցախի պարբերական մամուլի պատմությունից: Արցախի պարբերական մամուլի մատենագիտություն (1874-2009 թթ.): Պատմաքննական ներածությամբ, ծանոթագրություններով, մեկնաբանումներով, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս», 2010, 232 էջ:

Հարկ է նշել, որ բոլոր դարաշրջաններում գրահրատարակչական գործընթացները պայմանավորված են եղել հասարակական-տնտեսական պահանջներով և մեծ չափով նպաստել գրադարանային ֆոնդերի համալրմանն ու ճյուղային գիտությունների վերընթաց զարգացմանը: Մատենագիտական այս հրատարակությունների վերլուծությունը, որոնք աչքի են ընկնում նաև ժամանակագրական առանձնահատկություններով ու վիճակագրական տվյալներով, ցույց է տալիս, որ *մատենագիտական տեղեկատվության զարգացումը Հայաստանում և նրա սահմաններից դուրս, անշուշտ, կրել է համակարգային բնույթ՝ կարևոր դեր խաղալով տպագիր մշակույթի տարածման, ընթերցանության ու կրթության զարգացման բնագավառներում:*

Հայկական մշակութային ժառանգության ճակատագիրը արցախյան նոր պատերազմում և հայ գրատպության 510-ամյակը նշելու պատմական անհրաժեշտությունը

2012 թ. նշվեց հայ տպագրության 500-ամյակը, որի առիթով ՅՈՒՆԵՍԿՕ-ն Երևանը հռչակեց գրքի համաշխարհային մայրաքաղաք: Այդ կապակցությամբ 2010-2012 թթ. Հայաստանում, Արցախում (Շուշիում) և հայկական սփյուռքում կայացան մի շարք միջոցառումներ ու 500-ամյակին նվիրված գիտաժողովներ¹²: Եղան արժեքավոր հրապարակումներ, այդ

¹² Հայկական գրատպության 500-ամյակը 2010, 132 էջ: Շուշին՝ հայկական մշակույթի օջախ 2014, 240 էջ: Հայկազեան համալսարան 2014, 104 էջ:

թվում՝ «Հայ գրատպություն և գրքարվեստ» եզակի հանրագիտարանը (2015 թ.)¹³:

Տեղին է նշել, որ 2018 թ. հուլիսի 12-ին Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում՝ Ժուռնալիստների միության դահլիճում, նշվեց Շուշիի գրատպության 190-ամյակը՝ վերարժևորելով Շուշիի պատմական դերը ազգային մշակույթի զարգացման մեջ¹⁴: Ցավոք, Շուշիի ապագա զարգացումը¹⁵ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեյջանի սանձազերծած պատերազմի պատճառով ընդհատվեց: Ըստ ռադիոհեռուստատեսային լրահաղորդումների («Հ 1», «Երկիր մեդիա», «Շանթ», «Արմ Նյուզ») և Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության տվյալների՝ այդ պատերազմի հետևանքով հայկական մշակութային ժառանգության պատկառելի մասը՝ 2000 հուշարձան, 122 եկեղեցի, 13 վանք-համալիր, 52 ամրոց, 536 խաչքար և 12 թանգարան (այդ թվում՝ 10 պետական, 2 մասնավոր) հայտնվեցին ադրբեյջանա-թուրքական զավթիչների ձեռքում, որոնք ակնհայտ և բարբարոսաբար ոչնչացրել ու ոչնչացնում են հայ ազգային մշակույթի արժեքները. թշնամին ջանում է վերացնել հայկական մշակութային հիշողությունը Հայաստանի պատմական տարածքում կամ մեր մշակութային ժառանգությունը վերագրել «աղվանականի», որը մշակութաբանական և պատմաքննական տեսանկյուններից խիստ դատապարտելի է: Համաձայն Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության 2021 թ. մայիս-հունիսի տվյալների՝ Արցախի վերահսկողությունից դուրս է մնացել նաև 124 գրադարան. Շուշիի և Հադրութի կենտրոնական և Բերձորի քաղաքային գրադարանները՝ 68400 գրքային ֆոնդերով, ինչպես նաև 121 դպրոցական գրադարաններ, այդ թվում՝ Ասկերանի շրջանի 8, Մարտակերտի՝ 7, Մարտունու՝ 7, Շուշիի՝ 4, Հադրութի՝ 28, Քարվաճառի՝ 15 և Քաշաթաղի՝ 52 գրադարաններ, որոնց գրքային ֆոնդը կազմել է 548600 միավոր: Բոլոր ֆոնդերի ընդհանուր գումարը 617.000 միավոր գրականություն է, որի գոյության մասին նույնպես տեղեկություններ չկան:

Բացի վերը նշվածներից, ադրբեյջանցիների հսկողության տակ են անցել Շուշիի «Կաճառ» գիտական կենտրոնի (ղեկավար՝ պատմ. գիտ. թեկնածու Մհեր Հարությունյան) 30000 օրինակ գիրք պարունակող գրա-

¹³ Դեվրիկյան 2012, 2014, Սուքիասյան 2013, Сукиасян 2012, 35-36, Հայ գրատպություն և գրքարվեստ 2015:

¹⁴ Սուքիասյան 2018 (Երկու դար առաջ), 4, Սուքիասյան 2018 (նշվեց Շուշիում գրատպության...), 5:

¹⁵ Голос Армении 2020, 29 сент. - 5 окт.

դարանը, 150 անուն ամսագրեր (15000 միավոր), 190 անուն թերթեր (38000 միավոր), 1000000 արխիվային նյութեր, 90000 միավոր լուսանկարներ, 40 միավոր արձմաներ, 120 միավոր ատլիոհայնագրություններ և 40 միավոր տեսաձայնագրություններ: Մի խոսքով՝ կրթության, գիտության, պատմության և ընդհանուր մշակույթի վերաբերյալ տեղեկատվական հսկայաձավալ ռեսուրսներ, որոնց ճակատագիրն առայժմ անհայտ է. հավանքար, թալանվել կամ ոչնչացվել են: Այս ամենը վկայում է Ադրբեջանի շարունակական հակահայկական ու հայատյաց քաղաքականության¹⁶ մասին, որ հաշվի չի առնում միջազգային և հեղինակային բոլոր օրենքները¹⁷: Մեր կարծիքով, համաձայն նշված օրենքների և ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշումների, որոնք շրջանցելը պարզապես անկարելի է, հայկական մշակութային ժառանգությունը ենթակա է վերադարձման, և այդ խնդիրը պահանջում է հրատապ լուծում: Ակնհայտ է, որ ադրբեջանցիները իրագործել են մշակութային եղեռն և ենթակա են միջազգային դատապարտության:

2022 թ. լրանում է հայկական գրատպության 510-ամյակը¹⁸: Պատմամշակութային այդ մեծ իրադարձությունը, անշուշտ, պետք է նշվի պետական ու համահայկական մասշտաբներով և արժանանա նոր գնահատականների՝ որպես հայ գրքի բազմադարյան պատմության, հայագիտության ու քաղաքակրթության զարգացման նվաճումներից մեկը: Իսկ «Քաղաքակրթության սաղմերը Հայկական լեռնաշխարհում, - գրում է Լ.Ի. Մեչնիկովը, - ծագել են մեր թվականության սկզբից դեռ 2300 տարի առաջ»¹⁹:

Եզրակացություններ

Այսպիսով, օտարազգի հեղինակների և օտարալեզու աղբյուրների վկայություններով կարելի է հաստատել, որ եվրոպական գրատպության սկզբնավորման ու զարգացման գործում անմիջական մասնակցություն են ունեցել հայերը:

Համեմատական ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ ինչպես եվրոպացի շատ ազգերից առաջ, այնպես էլ նախկին Խորհրդային Միության ժողովուրդների և ներկայիս ԱՊՀ երկրների մեջ ազգային լեզվով առաջին տպագրություն իրականացնողները եղել են հայերը:

¹⁶ Մարտիրոսյան 2009:

¹⁷ Шрайберг, Земсков и др. 2007, Соколов 2019, 231-247, տե՛ս նաև Богуславский 1979, Богуславский 2005, 53-85:

¹⁸ Սուքիասյան 2021, 1, 6:

¹⁹ Мечников 2013, 241.

Գիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ հայ գրատպական կենտրոնների զարգացումը Հայաստանում, Սփյուռքում և Արցախում կրել է համակարգային բնույթ, նույն կերպ և մատենագիտությունը, որի միջոցով է միայն հնարավոր դառնում պատկերացում կազմել հայալեզու և օտարալեզու գրքերի ու պարբերական մամուլի մասին: Ընթերցողների հոգևոր պահանջները բավարարելու նպատակով շրջանառության մեջ դրված հրատարակությունների խմբային օրինակներն ու օգտագործված գրականությունն ունեն տեղեկատվական-հաղորդակցական և ճանաչողական մեծ նշանակություն. դրանք էլ կազմել են սույն հոդվածի մեթոդաբանական կառուցվածքի կարևորագույն մասը:

Փաստական նյութերի քննությունն ու վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ Արցախյան պատերազմի հետևանքով ադրբեջանցիների վերահսկողության տակ է մնացել հայկական մշակութային ժառանգության պատկառելի մասը, որը ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշումների, միջազգային օրենքների, պետք է ամբողջովին վերադարձվի հայերին:

Հայ գրատպության 510-ամյակը նշելը, կարծում ենք, պատմական անհրաժեշտություն է՝ որպես հայ գրքի ընդհանուր պատմության արտացոլում և քաղաքակրթության զարգացման կարևորագույն դրսևորում:

Գրականություն

Դեվրիկյան Վ.Գ. Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մաս Ա, 2012, 272 էջ, մաս Բ, 2014, Երևան, «Ձանգակ-97», 398 էջ:

Երևանի պետական համալսարանի հրատարակչություն 2011, Մատենագիտություն 1920-2011, կազմ.՝ Հ. Պետրոսյան, Լ. Հովհաննիսյան, խմբ.՝ Լ. Հովհաննիսյան, Երևան, ԵՊՀ հրատ., 224 էջ:

Իշխանյան Ռ.Ա. 1981, Հայ գիրքը 1512-1920, պատ. խմբ. Հ.Ս. Մանասերյան, գրախոս՝ Հ.Մ. Դավթյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 154 էջ:

Իշխանյան Ռ.Ա. 1982, Հակոբ Մեղապարտ, Երևան, «Հայաստան», 71 էջ:

Հայ գրատպություն և գրքարվեստ. հանրագիտարան 2015, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Գիտահրատարակչական խորհուրդ՝ Հ.Մ. Այվազյան (գլխ. խմբագիր) և ուրիշներ, Երևան, Հայկ. հանրագիտ. հրատ., 1120 էջ:

Հայ մամուլի դերը ազգային արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործում. ընտանիք, հայրենիք, եկեղեցի 2020, Նյութեր հայ մամուլի 225-ամյակին նվիրված գիտաժողովի (28-29 նոյեմբերի 2019 թ.), կազմ.՝ Հ. Ղազարյան, Երևան, «Գիրք», 317 էջ:

Հայկազեան համալսարան 2014, Հայ տպագրության 500-ամյակի ձեռնարկներ (5 մայիսի 2012-22 մարտի 2013), Պեյրուֆ, 104 էջ:

Հայկական գրատպության 500-ամյակը (1512-2012) 2010, Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում: Հանրապետական

- գիտաժողովի (2010 թ. ապրիլի 15-16) զեկուցումների ժողովածու, խմբ.՝ Ա.Վ. Գալստյան, Գ.Ա. Սուքիասյան, Երևան, «Մանկավարժ», 132 էջ:
- Հովհաննիսյան Պ.Հ. 2013, Մովսես Խորենացի: Մատենագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ., 436 էջ:
- Մարտիրոսյան Արտո Ս. 2009, Թուրք-ադրբեջանական հայատյաց քաղաքականությունը և հայերի ուժացումը, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս», 288 էջ (հայերեն և անգլերեն լեզուներով):
- Յարտմյան Հայր Տաճատ 1989, Սուրբ Ղազար կղզին Մայրավանք Մխիթարյաններու, Վենետիկ, Սբ. Ղազար, 151 էջ:
- Շուշին՝ հայկական մշակույթի օջախ: Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգ. գիտ. կոնֆ.-ի զեկույցներ 2014, Շուշի, Կաճառ գիտ. կենտրոն, 240 էջ:
- Պզտիկյան Յ. 2003, Մխիթարի և Մխիթարյաններու նպաստը հայ մշակույթին, Երևան, 80 էջ:
- Սուքիասյան Գ.Ա. 2013, Գրքագիտություն և հայ գրատպության պատմագրություն: Նվիրվում է հայկ. տպագրության 500-ամյակին, Երևան, «Էդիթ պրինտ», 160 էջ:
- Սուքիասյան Գ.Ա. 2018, Երկու դար առաջ Շուշին գրատպության կենտրոն էր, Հայաստանի Հանրապետություն, օգոստոսի 1, թիվ 142 (6898), էջ 4:
- Սուքիասյան Գ.Ա. 2018, Գիրքը, գրադարանը և ընթերցանությունը Հայաստանի պետական բուհերում, ուսումնական ձեռնարկ, Երևան, հեղ. հրատ., 112 էջ:
- Սուքիասյան Գ.Ա. 2018, Նշվեց Շուշիի գրատպության 190-ամյակը, Մանկավարժական համալսարան, 14 սեպտ., N 11 (1028), էջ 5:
- Սուքիասյան Գ.Ա. 2021, Ազգային լեզվով առաջին տպագրությունն իրականացնողները հայերն էին: Հայկական գրատպության 510-ամյակին ընդառաջ, Հայաստանի Հանրապետություն, նոյեմբերի 16, թիվ 196 (7637), էջ 1, 6:
- Богуславский М.М. 1979, Международная охрана культурных ценностей, Москва, Международные отношения, 192 с.
- Богуславский М.М. 2005, Культурные ценности в международном обороте: правовые аспекты, Москва, «Юрист», 427 с.
- Владимиров Л.И. 1988, Всеобщая история книги, Москва, «Книга», 312 с.
- Война, Голос Армении 2020, 29 сент.-5 окт., N 24 (21255), с. 3.
- История книги: учебник для вузов 1998, под ред. А.А.Говорова и Т.Г. Куприяновой, Москва, МГУП, «Мир книги», 346 с.
- Мечников Л.И. 2013, Цивилизация и великие исторические реки, Л.И. Мечников; предисл., комментарии В.И. Евдокимова, Москва, «Айрис-пресс», 320 с.
- Морган де Жак 2020, История армянского народа. Доблестные потомки великого Ноя, пер. с англ. Т.М. Шуликовой, Москва, ЗАО Центрполиграф, 385 с.
- Соколов А.В. 2019, Национальная безопасность и национальная библиотека, Библиотекосведение, т. 68, N 3, с. 231-247.
- Спафарий-Милеску Н.Г. 1960, Сибирь и Китай, предисл. В.Соловьева и А. Кидель. Кишинев, «Карта молдовеняскэ», 516 с.
- Сукиасян Г.А. 2012, История книги в Армении и армянской диаспоре, Вестник библиотечной ассамблеи Евразии: Научно-практич. журнал, Москва, N 3, с. 35-36.
- Сукиасян Г.А. 2019, Из истории развития литературно-исторических, культурных и библиографических связей армянского и таджикского народа, Культура и искусство (науч. журнал ВАК Республики Таджикистан), Душанбе, N 1, с. 65-73.

Шрайберг Я.Л., Земсков А.И. и др. 2007, Авторское право и библиотеки, Москва, ГПНТБ России, 48 с.

ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ 510-ԱՄՅԱԿԸ (1512-2022 ԹԹ.)

Գագիկ Սուքիասյան

Ամփոփում

Հայ գրքի և գրատպության պատմությունը համաշխարհային մշակույթի ու քաղաքակրթության պայծառ էջերից է, որանց դերն ու նշանակությունը բոլոր դարերում եղել և ժամանակակից կրթության ու գիտության զարգացման համար էլ մնում են արդիական: Արդի դարաշրջանի գլոբալ խնդիրներից է (հատկապես պատերազմական իրավիճակներում) գրքային և մշակութային ժառանգության փոխանցումը ապագա սերունդներին, որը խթանում է տեղեկատվության և սոցիալ-հաղորդակցական կապերի զարգացումը: Հայ գրատպության 510-ամյակի (1512-2022 թթ.) հոբելյանը նոր առիթ է պատմատեսական, մշակութաբանական ու մեթոդաբանական հարցերի ուսումնասիրության տեսանկյուններից արժևորելու այն՝ որպես գրքագիտության, հայագիտության ու քաղաքակրթության զարգացման նվաճումներից մեկը:

Բանալի բառեր՝ Հայ գրատպություն, եվրոպական գրատպություն, Սփյուռք, Արցախ, հայկական ձեռագրեր, մշակութային ժառանգություն, տպագիր հրատարակություններ:

510-ЛЕТИЕ АРМЯНСКОГО КНИГОПЕЧАТАНИЯ (1512-2022 ГГ.)

Гагик Сукиасян

Резюме

История армянского книгопечатания – одна из ярких страниц мировой культуры и цивилизации. К числу глобальных проблем современной эпохи (особенно в условиях войны) относится вопрос передачи культурного наследия будущим поколениям, что будет способствовать развитию информационных и социально-коммуникационных связей. Празднование 510-летия армянского книгопечатания (1512-2022 гг.) служит еще одним поводом для оценки и осмысления этого культурного феномена в контексте арменоведения и мировой цивилизации.

Ключевые слова – армянское книгопечатание, европейское книгопечатание, армянская диаспора (Спюрк), Арцах, армянские рукописи, культурное наследие, печатные издания.

THE 510TH ANNIVERSARY OF ARMENIAN BOOK PRINTING (1512-2022)

Gagik Sukiasyan

Abstract

The history of Armenian book printing is one of the brightest pages of world culture and civilization, the role and significance of which deals with all periods and remain relevant for the development of modern education and science. One of the global problems of the modern era (especially in times of war), is the transfer of books and cultural heritage to future generations, contributing to the development of information and social and communication ties. The celebration of the 510th anniversary of Armenian book printing (1512-2022) is a new reason for evaluating it from the point of view of studying historical, cultural and methodological issues as one of the achievements in the development of bibliography and Armenian Studies.

Key words – Armenian printing, European printing, Armenian Diaspora (Diaspora), Artsakh, Armenian manuscripts, cultural heritage, printed editions.